

**5.10. 2004թ. դեկտեմբեր ամսվա հիդրոտեղումաբարանական պայմանները Հայաստանում**

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, դեկտեմբերին օդի ամսական միջին ջերմաստիճանը ցածր է եղել նորմայից 2-4 աստիճանով, առանձին վայրերում՝ 5 աստիճանով:

Ամսվա առաջին և երկրորդ տասնօրյակներում օդի օրական միջին ջերմաստիճանն ամենուրեք ցածր է եղել նորմայից 8-10 աստիճանով: Դեկտեմբերի 21-ից օդի ջերմաստիճանն աստիճանաբար բարձրացել է և ամսի 21-25-ին և 29-31-ին օդի օրական միջին ջերմաստիճանը Լոռիում, Տավուշում, Լեռնային շրջաններում և Սյունիքում բարձր է եղել նորմայից 2-7 աստիճանով, Արարատյան դաշտում՝ ցածր 1-4 աստիճանով:

Առավել ցածր ջերմաստիճան է գրանցվել ամսի 16-20-ին: Նվազագույն ջերմաստիճանը Լեռնային շրջաններում, Տաշիրում (Լոռու մարզ) և Սիսիանում (Սյունիքի մարզ) գրանցվել է  $-21 -26^{\circ}\text{C}$ , Աշոցքում (Շիրակի մարզ)՝  $-30^{\circ}\text{C}$ , Լոռիում և Սյունիքի նախալեռներում՝  $-12 -18^{\circ}\text{C}$ , Արարատյան դաշտում՝  $-13 -16^{\circ}\text{C}$ , Տավուշում և Սյունիքի հովիտներում՝  $-7 -12^{\circ}\text{C}$ :

Լեռնային առանձին շրջաններում, Լոռիում և Արարատյան դաշտում առանձին օրեր գրանցված նվազագույն ջերմաստիճանները ցածր են եղել այդ օրերին երբևէ գրանցված բացարձակ նվազագույն ջերմաստիճաններից:

Պայմանավորված հարավ-արևմուտքից տաք օդային հոսանքների ներթափանցմամբ, ամսի 27-31-ին օդի ջերմաստիճանը բարձրացել է: Առավելագույն ջերմաստիճանը գրանցվել է ամսի 30-31-ին՝ Սյունիքում և Տավուշում՝  $+16 +20^{\circ}\text{C}$ , Լոռիում՝  $+10 +13^{\circ}\text{C}$ :

Ամսական տեղումների քանակը խիստ ցածր է եղել նորմայից: Սյունիքում և Մասրիկում (Գեղարքունիքի մարզ) այն կազմել է նորմայի 60-90%-ը, Շիրակում, Կոտայքում, Գեղարքունիքում և Արարատյան դաշտում այն խիստ ցածր է եղել նորմայից և կազմել նորմայի 5-20%-ը: Միայն Մարտունիում (Գեղարքունիքի մարզ) և Կապանում (Սյունիքի մարզ) տեղումների քանակը բարձր է եղել նորմայից և կազմել նորմայի 135%-ը, Լոռիում և Տավուշում տեղումներ ընդհանրապես չեն դիտվել:

Դեկտեմբերի 5-6-ին տեղումներ են դիտվել ամենուրեք, 12-ին և 15-17-ին՝ արևելյան շրջաններում, 20-21-ին և 24-ին՝ Արարատյան դաշտում: Մնացած օրերին գերակշռել է առանց տեղումների եղանակ:

Դեկտեմբերին 6-11-ին, 23-29-ին Արարատյան դաշտում, Ջերմուկում (Վայոց ձորի մարզ), Ապարանում և Թալիհում (Արագածոտնի մարզ), Ֆանտանում (Կոտայքի մարզ) դիտվել է մառախուղ, տեսանելիությունն առանձին ժամերի՝ 40-50մ:

Դեկտեմբերին առանձին օրեր Տաշիրում, Ապարանում, Լոռիում, Սևանում (Գեղարքունիքի մարզ) և Իջևանում (Տավուշի մարզ) դիտվել է քամու ուժգնացում, արագությունը հասել է 14-20 մ/վրկ, պոռթկումները՝ 24-30 մ/վրկ:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ հանրապետությունում առավելագույն ձյան ծածկը Աշոցքում կազմել է 36 սմ, Ջերմուկում՝ 29 սմ, Ապարանում՝ 24 սմ, Մասրիկում՝ 23 սմ, Ամասիայում (Շիրակի մարզ)՝ 19 սմ, Կոտայքում՝ 10-16 սմ, Գորիսում (Սյունիքի մարզ), Մարտունիում և Գավառում (Գեղարքունիքի մարզ)՝ 1-3 սմ: Արարատյան դաշտում, Լոռիում, Տավուշում և Սյունիքում ձյան ծածկը բացակայել է:

Հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են իրենց նորմաների մոտ 80-100%-ը:

Սևանա լճի մակարդակն ամսվա ընթացքում իջել է 6 սմ-ով և 2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել 1897.65 մ, որն 2003թ. նույն օրվա համեմատ բարձր է եղել 41 սմ-ով: